«Յունիբանկ» ԲԲԸ Խորհրդի 06.09.2023թ. որոշման համաձայն, ավանդի ներքոնշյալ պայմանները գործել են մինչև 25.09.2023թ.:

Տեղեկատվական ամփոփագիր

Ավանդի հիմնական պայմանները

Ավանդի ներդրման արժույթը			**ՀՀ դրամ**	**ԱՄՆ Դոլար**	**Եվրո**	**ՌԴ ռուբլի**
Ավանդի ներդրման նվազագույն գումարը			*100,000*	*1000*	*1000*	*20,000*
Ավանդի ներդրման ժամկետը	**Տոկոսների վճարման կարգը**		Տարեկան տոկոսադրույք			
30-90 օր	**ամենամսյա**	**Քարտային հաշիվ/ Բանկային հաշիվ**	5.25%	-	-	-
	ժամկետի վերջում		5.5%	-	-	-
91 – 180 օր	**ամենամսյա**	**Քարտային հաշիվ/ Բանկային հաշիվ**	7.5%	0.25%	-	0.5%
	ժամկետի վերջում		8%	0.25%	-	1.5%
181 – 365 օր	**ամենամսյա**	**Քարտային հաշիվ/ Բանկային հաշիվ**	9%	2%	-	0.5%
	ժամկետի վերջում		9.25%	2.25%	-	1.5%
366 – 549 օր	**ամենամսյա**	**Քարտային հաշիվ/ Բանկային հաշիվ**	9.5%	2.75%	1.3%	3.5%
	ժամկետի վերջում		9.7%	3%	1.6%	4%
550 – 730 օր	**ամենամսյա**	**Քարտային հաշիվ/ Բանկային հաշիվ**	10%	3%	1.7%	4.5%
	ժամկետի վերջում		10.2%	3.25%	2%	5%
Ավանդի առավելագույն գումարը			100,000,000* AMD	300,000 * USD	300,000 * EUR	20,000,000* RUR

*Առավելագույն գումարը գերազանցող ավանդների համար տոկոսադրույքները սահմանվում են պայմանագրային հիմունքներով:

Ժամկետային ավանդ, որը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար:

Տոկոսների վճարման պայմաններն իրականացվում են ավանդատուի ցանկությամբ՝ ժամկետի վերջում կամ ամենամսյա, ավանդատուի բանկային հաշվին կամ քարտային հաշվին:
Տոկոսների կապիտալացում չի իրականացվում:

Բոլոր ավանդատուներին տրամադրվում է նվեր՝ UNIPAY կոմունալ վճարումների միասնական համակարգի քարտ, իրավաբանական անձանց՝ «Ինտերնետ Բանկ-Հաճախորդ» համակարգ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սակագներ և տուժանքներ

1. Ժամկետային ավանդի հաշվի սպասարկումն իրականացվում է բանկային հաշիվների միջոցով: Եթե հաճախորդը «Յունիբանկ» ԲԲԸ-ում չունի բանկային հաշիվներ, ապա դրամային ժամկետային ավանդ ներդնող ավանդատուի համար Բանկը բացում է բանկային հաշիվ ՀՀ դրամով, իսկ արտարժույթով ժամկետային ավանդ ներդնելու դեպքում բացի արտարժութային բանկային հաշվից, բացվում է նաև ՀՀ դրամով բանկային հաշիվ:

2. Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ժամկետային ավանդատու ֆիզիկական անձ հաճախորդների հաշիվների համար յուրաքանչյուր հաշվի տարեկան սպասարկման վճարը կազմում է համապատասխանաբար 1200 և 300000 ՀՀ դրամ: Ավանդային հաշվի քաղվածքների և դրանց կրկնօրինակների տրամադրումն առանց ժամկետի սահմանափակման իրականացվում է անվճար: Բանկն իրավասու է միակողմանիորեն փակելու հաճախորդի բանկային հաշվեհամարը, եթե հաճախորդը չի ապահովել Բանկի սակագներով սահմանված սպասարկման վճարները, չնվազող մնացորդը և/կամ 1 տարուց ավել գործարքներ չի իրականացրել:

3. Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ավանդատու հաճախորդների յուրաքանչյուր հաշվի տարեկան սպասարկման վճարը կազմում է համապատասխանաբար 5000 և 300000 ՀՀ դրամ: Ավանդային հաշվի քաղվածքների տրամադրումն առանց ժամկետի սահմանափակման իրականացվում է անվճար: Առանձին տեղեկանքի կամ փաստաթղթի կրկնօրինակների տրամադրման վճարը կազմում է 1000 ՀՀ դրամ, իսկ թղթապանակի (որոշակի ժամանակաշրջանի փաստաթղթերի) համար՝ 5000 ՀՀ դրամ: Բանկն իրավասու է միակողմանիորեն փակելու հաճախորդի բանկային հաշվեհամարը, եթե հաճախորդը չի ապահովել Բանկի սակագներով սահմանված սպասարկման վճարները, չնվազող մնացորդը և/կամ 1 տարուց ավել գործարքներ չի իրականացրել:

4. Ավանդատուի պահանջով ավանդային պայմանագրի վաղաժամկետ խզման դեպքում.

ա/ ավանդի գումարից գանձվում են արդեն իսկ վճարված տոկոսագումարները, եթե ժամկետային ավանդի պայմանագրով սահմանված է տոկոսների ամենամսյա վճարում,

բ/ չի վճարվում ավանդի գումարի նկատմամբ հաշվեգրված տոկոսագումարը, եթե ժամկետային ավանդի պայմանագրով սահմանված է տոկոսների վճարում ժամկետի վերջում:

5. Բանկային ավանդի պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է ավանդի պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով: Եթե ավանդատուն ավանդի ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ավանդի գումարը, ապա ըստ պայմանագրում կատարված նշումի՝ կամ երկարաձգվում է պայմանագրի գործողության ժամկետը պայմանագրով սահմանված պայմաններով և երկարաձգման պահին

բանկում գործող տոկոսադրույքով, կամ ավանդի գումարը փոխանցվում է ավանդատուի բանկային հաշվին, որի նկատմամբ կիրառվում են բանկային հաշվի համար նախատեսված պայմանները: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժույթով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվում է 0%, իսկ ՀՀ դրամով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ՝ 0% տարեկան դրույքով՝ բանկում ներդրված փաստացի ժամանակահատվածի համար: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց արտարժույթով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվում է 0%, իսկ ՀՀ դրամով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ՝ 0% տարեկան դրույքով: Բանկն իրավունք ունի փոփոխել բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքը՝ Յունիբանկ ԲԲԸ Խորհրդի կողմից հաստատված դրույքների և սակագների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ բանկային հաշիվների սպասարկման պայմանագրով:

6. Ավանդատուի հաշվին Ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցներ՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:

7. Բանկային ավանդի պայմանագրով սահմանված Ավանդի համար տոկոսների չափը ավանդի գործողության ընթացքում Բանկի կողմից ենթակա չէ միակողմանիորեն նվազեցման:

8. Ավանդային հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են Անվանական տոկոսադրույքի հիման վրա:

9. Տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, այն տոկոսը, որն ավանդատուն կստանա 1000 դոլար ավանդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի համար տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով: